

տեսիլքներով գորս ամէնուն աչքերը չեն տեսներ եւ որոնց հաղորդակից կ'ըլլան իր միջոցովը. անիկա այն մոգն է որ կը յայտնաբերէ ոտքի կոխան եղած գեղեցկութիւնները ու առօրեայ հոգերով կնճռոտված մարդոց ներբաններուն ներքեւէն ժողվելով անոր անտեսուած բեկորները՝ կը ցուցնէ զանոնք զարմացած ուշադրութիւններու՝ իր փառքովը փառաւորելով զանոնք:

Արուեստը, ըլլայ գրական թէ ուրիշ ճիւղերու մէջ, գերագոյն արտայայտութիւն ըլլալով ցեղին, կը կազմէ թերեւս նաեւ անոր գոյութեան գերագոյն իրաւունքը, եւ այսօր յայտնի ճշմարտութիւն մըն է թէ այն ցեղերը ամէնէն մեծերը, ամէնէն զօրաւորները եղած են որոնց գեղեցկութեան բազիսը աւելի վառ, աւելի ճարճատուն եղած է. եւ մենք իսկ, կորսուած ափ մը ասիացի ժողովուրդ, նոյն իսկ հետքերը նախկին ժողովուրդի մը, յարատեւ ոտքի կոխան դարձած դէպի արեւմուտք արշաւող բարբարոսներու, ինչո՞վ եւ ի՞նչ հիման վրայ է որ կը պահանջենք մեր գոյութեան իրաւունքը. որովհետեւ մեծաբարբառ կարող ենք ըսել, հպարտութեամբ եւ բարձրագլուխ կրնանք ըսել թէ մեր նախնեաց վառած կրակը գեղեցկութեան, գերագոյն իտէալներու բազիսին մէջ, թոյլ չենք տուած որ մարի, թէ աշխարհաւեր բարբարոսներու յառաջ բերած խաւարը չէ զօրած զայն մթագնելու եւ թէ անիկա երբեմն առկայծ, երբեմն նուաղուն, բայց միշտ կենդանի, վառած է, հետզհետէ աւելի արծարծուելով, հետզհետէ աւելի բոցավառուելով:

Ահա այդ բազիսին ամէնէն արժանաւոր, ամէնէն տաղանդաւոր քուրմերէն մէկն է Ռուբէն Զարդարեանը որուն բանաստեղծական եւ գեղեցկագիտական արժէքը գնահատելու կոչուած են այսօր:

Շատոնց է որ կը ճանչնանք իր տաղանդին հրապոյրը. անիկա մեր գրական սերունդին անդրանիկներէն եղած է եւ նոյն իսկ այն օրերուն, երբ իր ձայնը Խարբերդէն կու գար մեզի, անոր երիտասարդ եւ գորեղ տաղանդը կը գծագրուէր այնպիսի ինքնայատուկ գիծերով, այնպիսի յանկուցիչ դաշնակութեամբ մը որ խոր տպաւորութիւն